# ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆ

Փետրվարի 2-ին վախճանվեց ակադեմիկոս, արվեստի ինստիտուտի հիմնադիր, արվեստի վաստակավոր գործիչ Ռուբեն Վարոսի Զարյանը:

Ռուբեն Զարյանը ծնվել է 1909-ին, Ալեքսանդրապոլում: Պատանեկությունը անց է կացրել Թիֆլիսում, ուր և ստացել է միջնակարգ կրթություն: 1936-ին ավարտել է Երևանի համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Այնուհետև ծայր է առել երիտասարդ բանասերի երկար ու ձիգ գործունեությունը: Ե. Չարենցից հետո նա 1936—47 թթ. ղեկավարել է Հայպետհրատի գեղարվեստական գրականության բաժինը: Այդ ընթացքում նրա եռանդուն նախաձեռնությամբ լույս են տեսել հայ դասական և արդի գրականության բազմաթիվ արժեքավոր գրքեր: 1941—43 թթ. եղել է խմբագիրը «Սովետական գրականություն» գրական հանդեսի, ուր և տպագրել է Պարույր Սևակի առաջին բանաստեղծությունները: Նրա հետագա ամբողջ գործունեությունը կապվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի հետ: 1953-ից եղել է Ակադեմիայի արվեստի սեկտորի վարիչը, 1958-ից մինչև 1988-ը, ամբողջ 30 տարի՝ արվեստի ինստիտուտի տնօրենը: Ի բնե օժտված նախաձեռնող ոգով, երիտասարդ շնորհալի մարդկանց նկատելու ձիրքով և նրանց առաջ մղելու բարյացակամությամբ՝ նպաստել է արվեստաբանական մի ամբողջ սերնդի ձևավորմանը: Կազմակերպել է հայ շեքսպիրագիտական կենտրոն և ստեղծել իր տեսակի մեջ հազվագյուտ շեքսպիրյան գրադարան: 1948-ից մինչև կյանքի վերջը լինելով գեղարվեստաթատերական ինստիտուտի դասախոս, նա իր սաների մեջ սերմանել է հայ գեղարվեստական մշակույթի սեր և ճաշակ, որ հատուկ էր իր հայրենասիրական նկարագրին:

Բեղմնավոր գրչի տեր մարդ, նա ստեղծել է գրականագիտական, թատերագիտական և հուշագրական երկերի մի ամբողջ գրադարան. «Աբովյանի կյանքը», «Սիրանույշ», «Ադամյան», «Էջեր հայկական շեքսպիրապատումից», «Հուշապատում» (3 գրքով) և այլ երկեր: Իր գրվածքների պարզ ու հստակ ոճի, մտերիմ գրելաձևի շնորհիվ նա ընթերցվող հեղինակ է ոչ միայն մասնագետների, այլև հայության լայն շրջաններում: Կյանքից հեռացավ այն վերջին մտավորականներից մեկը, որ բախտ էր ունեցել մտերիմ շփումներ ունենալու Ավետիք Իսահակյանի, Եղիշե Չարենցի, Ստեփան Զորյանի, Դերենիկ Դեմիրճյանի, Վահրամ Փափազյանի, Հակոբ Կոջոյանի, Մարտիրոս Սարյանի և ուրիշ մեծերի հետ, նրանց կերպարները ուրվագծելով իր հուշերում:

Ռուբեն Զարյանի անունը սիրելի կմնա իր մեծաթիվ ընկերների, գործակիցների և սաների սրտերում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ